Փետրվարի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 19 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նախագծում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցի շրջակայքի սելավատար ցանցերի կառուցում»,«Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների կահավորում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ակնաղբյուր, Խանցք և Նոր գյուղերի համայնքային կենտրոնների կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մանրանկարչության արվեստի կենտրոնի տնտեսական պայմանների բարելավում», «Արաբկիրի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում», «Նորքի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում», «Մալաթիայի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում», «Էջնիածնի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում», «Աշտարակի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում» և «Վանաձորի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում» ծրագրերը.

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին» ծրագիրը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցում» և «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի մարզադաշտի վերակառուցում ծրագրերը.

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվող «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 29.11.2013 թվականին կնքված դրամաշնորհի համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի ձիանոցի մասնակի վերանորգում» ծրագիրը.

«Հայ կրթություն» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Ավտոմեքենա Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի համար» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: